ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/41

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Բողոք բերող՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ

Մասնակցությամբ՝
«Բաղրամյանշին» ԲԲԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով բաց ընթացակարգ, հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 31.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1572-2022 գրությամբ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 24.01.2022թ.-ի 02/16.4/529-2022 գրության հիման վրա, 31.01.2022թ.-ին «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 31.01.2022թ.-ին:

01.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/41 համարի ծածկագիրը:

10.02.2022թ.-ին, 18.02.2022թ.-ին և 02.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.03.2022թ.-ին:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 24.01.2022թ.-ի 02/16.4/529-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի նոյեմբերի 18-ին հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով Հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել նաև <<Տ-Քնսթրաքշն>> և <<ՀԱԷԿ-ի շինարարություն>> փակ բաժնետիրական ընկերությունները, <<Մեծն Էրիկ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, <<Բաղրամյանշին>> բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություններ):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի

համաձայն Ընկերություններին ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջիններիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերությունների հայտերը մերժվել են:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերությունների տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Բաղրամյանշին» ԲԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 01.02.2022թ.-ի գրությամբ դիմել է «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1572-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Բաղրամյանշին» ԲԲԸ-ն 17.02.2022թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Բաղրամյանշին» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՅ-ԼՕ-2022/41 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարվել է «ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը շինարարական աշխատանքների գնման դեպքում հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, մոդելները (առկայության պարագայում), արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Ընթացակարգի հրավերի Մաս 2-ի 2.1.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, մոդելները (առկայության պարագայում), արտադրողները և երաշխիքային ժամկետները՝ համաձայն հավելված N 1.2-ի:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1.2-ի 8-րդ սյունակում նշված է, որ սարքավորման մոդելը նշվում է առկայության դեպքում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ՝

ա) 11-17, 17-ին հաջորդող տողում, 27-42, 83-84, 91, 93-98 տողերով ներկայացված չեն մոդելները:

բ) 43-44 տողերուվ ներկայացված չեն տեխնիկական բնութագրերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-4 արձանագրության.

1.1 կետի համաձայն՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցվել է մասնակիցներին՝ առաջարկելով Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել են ոչ ամբողջությամբ: Մասնավորապես չեն շտկվել.

Հավելված N 1.2-ի մասով

28-րդ, 30-31-րդ, 34-րդ, 83-րդ, 91-րդ և 94-րդ փողերով ներկայացված սարքավորումների մոդելները անձնագրային բնութագրերով չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

1.3 կետով որոշվել է «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտը մերժել:

Այնուհետև, ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետևնա՝ Օրենք) «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքաի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարվել է «ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ՝

ա) 11-17, 17-ին հաջորդող տողում, 27-42, 83-84, 91, 93-98 տողերով ներկայացված չեն մոդելները:

բ) 43-44 տողերուվ ներկայացված չեն տեխնիկական բնութագրերը:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամպատասխանությունների մասին ծանուցվել է մասնակիցներին՝ առաջարկելով Կարգի 41-րդ կետի պահանձների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել են ոչ ամբողջությամբ: Մասնավորապես չեն շտկվել.

Հավելված N 1.2-ի մասով՝ 28-րդ, 30-31-րդ, 34-րդ, 83-րդ, 91-րդ և 94-րդ տողերով ներկայացված սարքավորումների մոդելները անձնագրային բնութագրերով չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

1.3 կետով որոշվել է «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտը մերժել:

Այս կապակցությամբ բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում երկու կարևոր հանգամանքի վրա, որը, մեր կարծիքով, էական նշանակություն ունեն սույն գործի քննության համար: Մասնավորապես.

ա) 28-րդ, 30-31-րդ, 34-րդ, 83-րդ, 91-րդ և 94-րդ տողերով ներկայացված սարքավորումների մոդելները նշված չլինելու մասով

Ինչպես արդեն նշել ենք, գնահատող հանձնաժողովը որպես Հավելված 1.2 Ընթացակարգի հրավերի անհամապատասխանություն նշել է 28-րդ, 30-31-րդ, 34-րդ, 83-րդ, 91-րդ և 94-րդ տողերով ներկայացված սարքավորումների մոդելները նշված չլինելու փաստը և առաջարկել նշել մոդել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ըստ Ընթացակարգի հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետի, հրավերի Մաս 2-ի 2.1.1 կետի և հրավերի Հավելված 1.2-ի 8-րդ սյունակի՝ սարքավորման մոդելը նշվում է առկայության դեպքում:

Տվյալ պարագայում «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից ի սկբանե 28-րդ, 30-31-րդ, 34-րդ, 83-րդ, 91-րդ և 94-րդ տողերով ներկայացված սարքավորումների համար չի նշել տվյալ սարքավորումների մոդելները՝ դրանց բացակայությամբ պայմանավորված:

Ավելին, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից այլ արտադրողների սարքավորումներով (օրինակ, 11-26 տողեր) նույնպես մոդել չի նշվել, բայց անհասկանալիորեն մոդելը պահանջվել է նշել միայն նշված սարքավորումների մասով:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ԲԲԸ-ի կողմից առաջարկվող սարքավորումները չունեին մոդելներ:

Մասնավորապես, «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն վերոհիշյալ սարքավորումները առաջարկելիս՝ դիմել է իր սարքավորումներ մատակարարող «ԱՍ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին (վերոհիշյալ ընկերությունների համագործակցության փաստաթղթերը կցվում են)՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն սարքավորումների պարամետրերի վերաբերյալ:

«ԱՍ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն նախ բանավոր, իսկ այնուհետև գրավոր (գրությունը կցվում է) հայտնել է հետևյալը. ««ԱՍ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն ՀՀ է ներմուծում տարբեր տեսակի

սարքավորումներ, այդ թվում նաև օդափոխության համակարգեր և կաթսայատան սարքավորումներ: Տեղեկացնում ենք նաև, որ «ԱՍ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն հանդիսանում է ռուսական ընկերության՝ «Завод ВЕНТИЛЯТОР» ООО ներկայացուցիչը Հայաստանում: «Завод ВЕНТИЛЯТОР» ООО-ի կողմից արտադրվում են տարբեր օդափոխման համակարգեր: Նման արտադրանքներին արտադրական մոդել շնորհվում է «Завод ВЕНТИЛЯТОР» ООО-ի կողմից պատվիրատուի կողմից (տվյալ դեպքում «ԱՍ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի) համապատասխան արտադրանք պատվիրելու արդյունքում՝ այդ արտադրանքը պատվիրատուին հանձնելիս: Տեղեկացնում ենք նաև, որ համապատասխան պատվերի առկայության դեպքում «Завод ВЕНТИЛЯТОР» ООО-ի կողմից արտադրվում են նաև հատուկ պարամետրեր ունեցող օդափոխության համակարգեր (վերոհիշյալի վերաբերյալ առկա է տեղեկատվություն նաև ռուսական ընկերության պաշտոնական կայքում, արտատպումը կցվում է): Ի հավաստումն վերոհիշյալ փաստերի՝ «ԱՍ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից կատարվել են համապատասխան հարցումներ՝ ուղղված «Завод ВЕНТИЛЯТОР» ООО-ին: Պատասխանները ստանալուն պես՝ դրանք կներկայացվեն Ձեզ»:

Նման պարագայում գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Կարգի 41-րդ կետի համաձայն՝ որպես թերություն, անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրելով Հավելված 1.2-ի 28-րդ, 30-31-րդ, 34-րդ, 83-րդ, 91-րդ և 94-րդ տողերով սարքավորումների մոդելները չնշելը՝ գործել է ոչ իրավաչափ՝ քանի որ հենց Ընթացակարգի հրավերն է ամրագրել, որ սարքավորման մոդելը նշվում է միայն առկայության դեպքում:

Նման պարագայում գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ ոչ իրավաչափ շտկման արդյունքում առաջացել է բացասական հետևանք, քանի որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն կանգնել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև, քանի որ եթե հանձնաժողովը գործեր իրավաչափ, ապա վերոհիշյալ իրավիճակը վրա չէր հասնի:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ

սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության առկայությունը իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Նման պարագայում քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 41-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) պահանջը (հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունը), ուստի գտնում ենք, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Բողոքներ քննող անձին նաև խնդրում ենք նկատի ունենալ, որ ևս մեկ շատ կարևոր հանգամանք.

Քանի որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն ի սկզբանե, հայտով ներկայացրած Հավելված 1.2-ի 28-րդ, 30-31-րդ, 34-րդ, 83-րդ, 91-րդ և 94-րդ տողերով սարքավորումների մոդելները չի նշել, քանի որ ըստ ունեցած տեղեկությունների՝ նման մոդելավորումը առկա չի եղել:

Այնուամենայնիվ, քանի որ գնահատող հանձնաժողովից ստացվել է իմպերատիվ պահանջ ներկայացնելու տվյալ տողերով ներկայացված սարքավորումների մոդելները, ապա «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն ուսումնասիրելով հանձնաժողովի 13.02.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրությունը և տեսնելով, թե Հավելված 1.2-ի 28-րդ, 30-31-րդ, 34-րդ, 83-րդ, 91-րդ և 94-րդ տողերով որ ընկերությունների առաջարկված սարքավորումները և դրանց մոդելներն են գնահատվել հրավերի պահանջներին բավարարող /շտկման պահանջ չի ներկայացվել/, ուստի շտկումը կատարվել է այդ մասնակիցների բավարար գնահատված հայտերին համապատասխան:

Մասնավորապես, 28-րդ, 30-31-րդ, 34-րդ, 83-րդ տողերի շտկման ժամանակ Ընկերությունը առաջնորդվելով արձանագրությամբ արդեն բավարար գնահատված

մասնակից «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՍՊԸ-ի Հավելված 1.2-ով (կցվում է)՝ նույնական լրացրել է նաև իր Հավելված 1.2-ը՝ 28-րդ, 30-31-րդ, 34-րդ, 83-րդ փողերի մասով և շտկմամբ ներկայացրել հանձնաժողովին:

91-րդ և 94-րդ փողերի շտկման ժամանակ Ընկերությունը առաջնորդվելով արձանագրությամբ արդեն բավարար գնահատված մասնակից «Տ-քնսթրաքշն» ՍՊԸ-ի Հավելված 1.2-ով (կցվում է)՝ նույնական լրացրել է նաև իր Հավելված 1.2-ը և շտկմամբ ներկայացրել հանձնաժողովին:

Նման պարագայում «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն ունեցել է լեգեգիտիմ ակնկալիք, որ եթե վերոհիշյալ լրացված փողերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին բավարարող և շտկման պահանջ չի ներկայացվել, ապա դրանք լիովին համապատասխանում են հրավերի պահանջներին և կարող են որպես շտկում /ճիշտ տարբերակ/ ներկայացվել նաև «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից:

Սակայն անհասկանալիորեն այլ մասնակիցների կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված տեղեկատվությունը անբավարար է գնահատվել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի դեպքում:

Տվյալ պարագայում բացի լեգեգիտիմ ակնկալիքի սկզբունքից, նաև խախտվել է ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված ողջամտության և կանխատեսելության սկզբունքը:

Բողոքներ քննող անձին նաև խնդրում ենք սույն գործը քննելիս նաև հաշվի առնել, որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ում աշխատում եմ մոտ գրանցված 170 աշխատակից և Ցուցակում ներառվելու դեպքում Ընկերությունը ստիպված պետք է գնա աշխատեղերի կրճատմանը, եթե ոչ Ընկերության գործունեության դադարեցմանը, ինչը վերջին հաշվով նաև կարող է վնաս պատճառել պետությանը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Մաասնակցի դրսևորած վարքագիծը՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2022/41 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման աշխատանքներ ձեռքբերման նպատակով 18.11.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հայտերի ներկայացման և բացման վերջնաժամկետ է սահմանվել 29.12.2021թ.-ին ժամը 11:30-ին:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.01.2022թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Հավելված թիվ 1.2-ի մասով «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից 1-17-րդ, 17-ին հաջորդող տողերով, 27-42-րդ, 83-84-րդ, 89-րդ, 91-րդ և 93-98-րդ տողերով չեն ներկայացվել մոդելները, իսկ 43-44-րդ տողերով չեն ներկայացվել տեխնիկական բնութագրերը:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (14.01.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի 19.01.2022թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից 28-րդ, 30-31-րդ, 34-րդ, 83-րդ 91-րդ և 94-րդ տողերով ներկայացված սարքավորումների մոդելները անձնագրային տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջի հիման վրա «Բաղրամյանշին» ԲԲ ընկերության հայտը մերժել:

viii. Ընթացակարգի շրջանակներում «Տ-Քնսթրաքշն» և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերությունների կողմից 24.01.2022թ.-ին ներկայացվել է բողոք և համանման բողոք:

ix. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 15.02.2022թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/12 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ Բողոքներ քննող անձը, արձանագրել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.01.2022թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրությամբ «Տ-Քնսթրաքշն» և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերությունների

կողմից հայտում՝ մոդելները չներկայացնելու հիմքով, արձանագրելով անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, գործել է Կարգի 41-րդ կետով և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտմամբ, քանի որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերության և Ընթացակարգի հրավերի Հավելված թիվ 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրի համաձայն՝ մասնակցի կողմից հայտով մոդելի ներկայացման պարտադիր պահանջ սահմանված չէ, այլ միայն սահմանվել է առկայության պարագայում, որպիսի պայմաններում Ընկերությունների կողմից հայտով մոդելների չներկայացնելը չի կարող ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետի համաձայն շտկման պահանջ ներկայացնելու հիմք հանդիսանալ, քանի որ Ընկերությունները տվյալ դեպքում թույլ չեն տվել հրավերով սահմանված պահանջի խախտում: Միևնույն ժամանակ, վերը նշված հիմնավորումներից ելնելով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 19.01.2022թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրության 1.3-րդ կետով կայացված որոշմամբ Կարգի 42-րդ կետի համաձայն մերժելով «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի հայտը՝ մոդելները չներկայացնելու հիմքով, իսկ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը՝ այն հիմքով, որ վերջինիս կողմից շտկման արդյունքում 7-րդ, 9-րդ, 27-28-րդ, 30-33-րդ, 36-38-րդ և 96-րդ տողերով ներկայացված սարքավորումների մոդելները անձնագրային տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը տվյալ դեպքում Ընկերությունների կողմից հայտով ներկայացված Հավելված թիվ 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրի գնահատումը հրավերով սահմանված պահանջների նկատմամբ ի սկզբանե պետք է իրականացներ Ընկերությունների կողմից մոդելների չներկայացման պայմաններում: Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը որոշել է՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲ և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերությունների կողմից 24.01.2022թ.-ն ներկայացված բողոքը և համանման բողոքը բավարարել ամբողջությամբ՝ պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Տ-Քնսթրաքշն» և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերությունների ներկայացրած հայտերի մասով դադարեցնելու 13.01.2022թ.-ի գնահատող հանձնաժողովի նիստի 2-3 արձանագրության 1.2 կետով՝ մոդելները ներկայացնելու պահանջը, մոդելները չներկայացնելու արդյունքում անհամապատասխանությունը չշտկված գնահատելու, որպես հետևանք՝ հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասով, անվավեր ճանաչել 19.01.2022թ.-ի

գնահատող հանձնաժողովի նիստի 2-4 արձանագրության 1.1 և 1.3 կետերը և դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1572-2022 գրությամբ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

զ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Նույն կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,

բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման աշխատանքներ ձեռքբերման նպատակով 18.11.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի

միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման աշխատանքներ ձեռքբերման նպատակով 18.11.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2022թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Հավելված թիվ 1.2-ի մասով «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից 1-17-րդ, 17-ին հաջորդող տողերով, 27-42-րդ, 83-84-րդ, 89-րդ, 91-րդ և 93-98-րդ տողերով չեն ներկայացվել մոդելները, իսկ 43-44-րդ տողերով չեն ներկայացվել տեխնիկական բնութագրերը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (14.01.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն Հանձնաժողովի 19.01.2022թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից 28-րդ, 30-31-րդ, 34-րդ, 83-րդ 91-րդ և 94-րդ տողերով ներկայացված սարքավորումների մոդելները անձնագրային տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ինչով պայմանավորված որոշում է կայացվել Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջի հիման վրա «Բաղրամյանշին» ԲԲ ընկերության հայտը մերժել:

Ընթացակարգի շրջանակներում «Տ-Քնսթրաքշն» և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերությունների կողմից 24.01.2022թ.-ին ներկայացված բողոքը և համանման բողոքը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 15.02.2022թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/12 ծածկագրով կայացրած որոշմամբ բավարարվել է ամբողջությամբ, այն պատճառաբանությամբ, որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերության և Ընթացակարգի հրավերի Հավելված թիվ 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրի համաձայն՝ մասնակցի կողմից հայտով մոդելի ներկայացման պարտադիր պահանջ սահմանված չէ, այլ միայն սահմանվել է առկայության պարագայում, որպիսի պայմաններում հայտով մոդելների չներկայացնելը չի կարող ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետի համաձայն շտկման պահանջ ներկայացնելու հիմք հանդիսանալ, իսկ շտկում պահանջելու արդյունքում շտկված մոդելների անձնագրային տեխնիկական բնութագրերում կրկին անհամապատասխանություն արձանագրելը ոչ իրավաչափ է, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը տվյալ դեպքում Ընկերությունների կողմից հայտով ներկայացված

Հավելված թիվ 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրի գնահատումը հրավերով սահմանված պահանջների նկատմամբ ի սկզբանե պետք է իրականացներ մոդելների չներկայացման պայմաններում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝

համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է

ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 15.02.2022թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/12 ծածկագրով կայացրած որոշմամբ հաստատված հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ վերոնշյալ որոշմամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերության և Ընթացակարգի հրավերի Հավելված թիվ 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրի համաձայն՝ մասնակցի կողմից հայտով մոդելի ներկայացման պարտադիր պահանջ սահմանված չէ, այլ միայն սահմանվել է առկայության պարագայում, որպիսի պայմաններում հայտով մոդելների չներկայացնելը չի կարող ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետի համաձայն շտկման պահանջ ներկայացնելու հիմք հանդիսանալ, իսկ շտկում պահանջելու արդյունքում շտկված մոդելների անձնագրային տեխնիկական բնութագրերում կրկին անհամապատասխանություն արձանագրելը ոչ իրավաչափ է, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը տվյալ դեպքում Ընկերությունների կողմից հայտով ներկայացված Հավելված թիվ 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրի գնահատումը հրավերով սահմանված պահանջների նկատմամբ ի սկզբանե պետք է իրականացներ մոդելների չներկայացման պայմաններում:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտում՝ մոդելներ չներկայացնելու մասով, անհամապատասխանություն արձանագրելու և վերջինիս հայտը մերժելու մասին կայացված որոշումը նույնանում է «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի մասով Հանձնաժողովի կողմից կայացված որոշման հետ, որպիսի գործողությունները ԳԲՔԱ-ՆԳ-2022/12 ծածկագրով կայացրած որոշմամբ դիտարկվել են ոչ իրավաչափ, ինչով պայմանավորված վերանում է Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Ավելին՝ Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ … գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանի 26-րդ կետի համաձայն՝ Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հրամանի 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 15.02.2022թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/12 ծածկագրով կայացրած իրավապարտադիր ուժ ունեցող որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտը, մոդելները չներկայացնելու հիմքով, անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ:

Միաժամանակ Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտում, քանի որ Ընթացակարգի հրավերի հայտերի ներկայացման և բացման վերջնաժամկետ է սահմանվել 29.12.2021թ.-ին ժամը 11:30-ին, իսկ Հանձնաժողովի կողմից «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը կայացվել է Հանձնաժողովի 19.01.2022թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրությամբ՝ տասն աշխատանքային օրվա խախտմամբ, ինչի արդյունքում, այս մասով նույնպես, «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1572-2022 գրությամբ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/41 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**